12993

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 26 » 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0205-21

Ձեռնարկողը՝ ***«Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ***
Կոտայքի մարզ, գ. Արզնի, Արզնի-Աբովյան խճ. 5/2

Գործունեությունը՝ ***«Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0205-21

<26> 10 2021թ.

Արզնի տոհմային ԹՏԽ-ի տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արզնի համայնք

Ներածական մաս. «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲ ընկերությունը գտնվում է Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում, Արզնի-Աբովյան խճ. 5/2 հասցեում, Աբովյան քաղաքից դեպի հյուսիս արմուտք՝ 2կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Նոր Հաճն և Բյուրեղավան քաղաքները:

Ընկերության տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1400մ բարձրության վրա: Տարածքի կենտրոնական մասի աշխարհագրական կոորդինատներն են 40°17'55 հս. լայն. և 44°36'36 արլ. երկայն.:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲ ընկերությունը զբաղվում է տոհմային թռչնաբուծությամբ և տավարաբուծությամբ: Մասնագիտացել է ձվի արտադրության մեջ: Ընկերությունը հանդիսանում է հանրապետության խոշոր ձու արտադրողներից: Սննդային ձվերը հիմնականում ստանում են հավերի ձվատու ցեղատեսակներից:

Ֆերման գործունեություն է ծավալել դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակաշրջանից: Որպես Արզնի Սովխոզ, ստեղծվել է անցյալ դարի 60-ականներին: Անկախության տարիներին տնտեսությունը գրեթե դադարել է գործել: «Արզնի տոհմային ԹՏԽ» ԲԲ ընկերությունը Հայաստանի անկախության տարիներին առաջիններից էր, որ սկսեց զարգացնել տեղական արտադրությունը և շուկայում վերականգնեց տեղական արտադրանքը:

«Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ պլանավորում է իրականացնել տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, տեղադրելով հավերի բուծման և ձվի ստացման «Hellmann Poultry GmbH & Co»

ընկերության վանդակային սարքավորումների հոսքագիծ: Այս ընկերության հոսքագիծը համարվում է լավագույններից մեկը աշխարհում և ապահովում է տեխնիկական ստանդարտները և նորմաների պահանջները: Այս տիպի վանդակային սարքավորումները առանձնանում են մի քանի հիմնական առանձնահատկություններով.

- թռչունների կեցության համար սարքավորումների հարմար ձևավորմամբ,
- թռչունների պահման ավտոմատ կառավարման համակարգով,
- ավտոմատ համակարգով փակվող/բացվող վանդակներ՝ շարժական փեղկերով,
- թռչունների սննդի և ջրի ավտոմատ մատակարարման համակարգեր,
- ֆերմայում ջերմային ռեժիմի ավտոմատ կառավարում,
- ֆերմայում խոնավության ավտոմատ կառավարում,
- ձվի հավաքման վերելակային համակարգ,
- թռչնաղբի հավաքման և հեռացման ավտոմատ համակարգ:

Այս տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման արդյունքում ընկերությունը ստանալու է կերային բազայի կորուստների և Էլեկտրաէներգիայի ծախսի զգալի կրճատում, ձվի խոտանման տոկոսի նվազում, ֆերմայի աշխատակիցների ձեռքի աշխատանքի կտրուկ նվազեցում թռչնանոցներում:

Թռչնանոցը, որում իրականացվելու է տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման ծրագիրը, ունի 96մ երկարություն և 18մ լայնություն:

Նոր վանդակային սարքավորումների հոսքագծերը որոնք նախատեսված են, արտադրական թռչնաբուծության նպատակով, ձվատու հավերի պահման համար բազմահարկ են, ունեն 4 կամ 5 հարկերից կազմված մարտկոցներ: Թռչնանոցում նախատեսվում է տեղադրել 2 շարք 5 հարկանի և 4 շարք 4 հարկանի վանդակային թռչնանոցներ: Յուրաքանչյուր շարք կազմված է սեկցիաներից, որոնք ունեն 1.205մ երկարություն: Սեկցիաները բաժանված են վանդակների որոնք ունեն 59սմ խորություն և 60սմ երկարություն, ընդհանուր 3.540մ^2 մակերեսով: Վանդակները նախատեսված են 8 գլուխ թռչունի համար: Յուրաքանչյուր թռչունի հաշվարկով ստացվում է 443սմ^2 մակերես իսկ կերի հասանելիության ճակատը կազմում է 7.5սմ:

-Ձվի հավաքման վերելակ,
-թռչնաղբի չորացման խողովակ,
- խմելու ջրի համակարգ,
- կերի մատակարաման շղթայի շարժիչային միավոր,
- կերի շղթայի շրջադարձ,
- շարժիչային միավոր համակարգ,
- թռչնաղբի հեռացման կոնվեյեր:

Հոսքագծի յուրաքանչյուր շարքի սկզբնամասում տեղակայված է ձվի հավաքման համակարգ, որն աշխատում է վերելակային համակարգով, ապահովելով արտադրանքի անվնաս և մաքուր հավաքումը, բացառելով մարդկային գործոնի ազդեցությունը այդ գործընթացի վրա: Շարքի վերջում տեղակայված է թռչնաղբի հավաքման կոլեկտոր: Հոսքագիծն ունի մի շարք որակական առանձնահատկություններ, որոնք ներկայացվում են կետերով:

- Հոսքագիծն իր մեջ ներառում է ամբողջական աշխատանքային համակարգեր, որոնք պատրաստված են բարձրորակ մետաղական ցինկից և ալյումինից, ունեն հակակոռոզիոն ծածկույթ: Այս մետաղական կոնստրուկցիան ունի կոռոզիայի նկատմամբ 3 անգամ ավելի կայունություն սովորական ցինկապատ կոնստրուկցիաների համեմատությամբ:

- Խմելու ջրի մատակարարման համակարգն ամբողջական հավաքված է գերմանական արտադրության դետալներով: Յուրաքանչյուր վանդակում նախատեսված է 2 խմելու կետ՝ պատրաստված բարձրորակ մետաղից, գնդաձև տակառներ՝ յուրաքանչյուր հարկի համար առանձին, որոնք ապահովում են թռչունների համար ջրի անհրաժեշտ քանակությունը: Համակարգը ամբողջությամբ հերմետիկ է, որի մեջ ջուրը չի կարող կեղտոտվել, կամ խառնվել այլ հեղուկի հետ: Խմելու կետերի տակ տեղակայված են V-ձև ձագարներ, որոնք հավաքում են ջրի ավելցուկը, որպեսզի այն չթափվի թռչնաղբի հավաքման ժապավենային կոնվեյերի վրա:
- Կերի բաշխումը ավտոմատացված է այն գործում է կերի բաշխման շղթայական ցիկլով: Այս համակարգը նվազագույնին է հասցնում կերի կորուստը: Համակարգը ապահովում է կերի հավասարաչափ դոզավորում: Յուրաքանչյուր հարկի համար գործում է առանձին շարժիչային միավոր, որն ապահովում է կերի մատակարարման շղթայի 23մ/րոպե արագություն:
- Արտադրանքի՝ ձվի հավաքման վերելակային համակարգն իրենից ներկայացնում է ժապավենային փոխարկիչ 92մմ լայնությամբ: Յուրաքանչյուր մարտկոցի համար աշխատում է փոխանցումային մեկ ձվի հավաքման համակարգ: Վերելակային մեխանիզմն ապահովում է շարքերից ձվի հավաքումն առանձին առանձին:
- Թռչնաղբի հավաքման ժապավենի շարժիչային մեխանիզմը հնարավորություն է տալիս կարգավորել արագությունը և ապահովել ժապավենի մաքրումը թռչնաղբից: Ժապավենը մաշվածության հանդեպ բավականին կայուն է, պոլիմերային նյութից է պատրաստված, 1մմ հաստությամբ և շարժվում է միջինում 3.7մ/րոպե արագությամբ: Այն արտադրվում է Գերմանիայում, գրեթե հավերժ է շահագործման համար, կրծողների կողմից վնասվելու ռիսկը բացառվում է:
- Կերի մատակարարումն իրականացվում է 2 հատ սիլոսային բունկերներից, յուրաքանչյուրը 5.79մ բարձրությամբ, 23.4մ^3/15.2տ տարողությամբ: Սիլոսներն ի վիճակի են բեռնվելու կեր տեղափոխող բեռնատարներից և մեխանիկական և պնևմատիկ եղանակներով: Սիլոսների արտաքին ալիքավոր ծածկույթը պաշտպանում է կերը արտաքին ջերմային տատանումներից: Կերի մատակարարաման համակարգի արտադրողականությունը 10տ/ժամ է: Բունկերները հագեցած են կերի կշռման նպատակով տենզոցուցիչներով, որոնց տվյալները գրանցվում են համակարգչում:
- Թռչնաղբի հեռացման համակարգ յուրաքանչյուր հոսքագծի համար 1 հատ է նախատեսվում: Այն չժանգոտվող մետաղից, 500մմ լայնությամբ հատուկ տեղափոխող ժապավենով համակարգ է որից թռչնաղբը տեղափոխում է 3.4մ բարձրությամբ, բարձր արագությամբ, կոնվեյերով դեպի բեռնատար ավտոմեքենայի մեջ:
- Ջրի նախապատրաստման հանգույցն իր մեջ ներառում է ջրաչափ սարք, ջրի մաքրման ֆիլտրներ, ճնշման կարգավորման փականներ ծախսաչափ համակարգչային կարգավորմամբ, ճնշման չափիչ սարքեր և խողովակային անցումներ:
- Օդափոխության համակարգը լրիվ ավտոմատացված սեզոնային կարգավորումով համակարգ է, համաձայն բիզնես պլանով նախատեսված սպեցիֆիկացիայի, հարմարեցված թռչունների կենսագործունեության համար անհրաժեշտ կլիմայական պայմանների ապահովման համար: Այն իր մեջ ներառում է օդի մատակարարման և հեռացման համակարգեր:
- Լուսավորության համակարգը կարգավորվում է համակարգչային ծրագրով: Նախատեսվում են 240 հատ 7 Վատտ հզորության լուսադիոդային (LED) լուսատուներ: Լուսատուների մեջ հեռավորությունը 4մ, 10 շարքով:
- Օդի խոնավեցման համակարգը նախատեսվում է 1 հատ, 192 ներարկիչներով, ավտոմատ կառավարման համակարգով:

Վերազինման արդյունքում թռչնի թվաքանակի փոփոխություն չի նախատեսվում, ուստի մթնոլորտային արտանետումների ավելացում չի պլանավորվում: Վերազինման աշխատանքներն իրականացվելու են փակ թռչնանոցներում և մոնտաժային աշխատանքների ժամանակ հնարավոր արտանետումների ծավալները կլինեն աննշան կամ կբացակայեն:

Ջրային ռեսուրսների օգտագործում և պաշտպանություն – ընկերությունը ջրօգտագործման համար ունի խմելու ջրի մատակարարման պայմանագիր Վեոլիա Ջուր ՓԲ ընկերության հետ, ինչպես նաև տեխնիկական ջրօգտագործման նպատակով շահագործում է մեկ խորքային հոր, որի համար ունի ջրօգտագործման թույլտվություն՝ թիվ 0077, որն ուժի մեջ է 26.05.2020թ. մինչ և 26.05.2023թ, համաձայն գործող ՋԹ-ի ընկերության տրամադրված է 259,893 հազմ^3/տարի ջրի օգտագործման թույլտվության: Վերազինման արդյունքում ընկերությունը կունենա տեխնիկական ջրի օգտագործման ծավալների և ջրահեռացման ծավալների կրճատում: Համաձայն հոսքագծի տեխնիկա-տեխնոլոգիական ցուցանիշների, այս վերազինման արդյունքում նախատեսվում է ջրի ծախսի կրճատուկ 10-20% սահմաններում:

Հողային ռեսուրսների օգտագործում և պաշտպանություն – վերազինման ընթացքում նոր տարածքների ընդգրկում չի լինելու, ուստի բացառվում են հողային ռեսուրսների օգտագործման, կամ աղտոտման գործողությունները:

Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցություն – վերազինման ընթացքում վայրի բնության վրա ազդեցությունը բացառվում է, գործողություններն իրականցվելու են ընկերության տարածքում՝ թռչնանոցում, որոնք փակ քարե շինություններ են:

Աղմուկ և թրթռում – աղմուկի և թրթռման մակարդակները գտնվում են թույլատրելիի սահմաններում: Աղմուկի առավելագույն մակարդակը ընկերության արտաքին պարսպի շրջագծով կազմել է 30 դԲԱ:

Պինդ թափոններ – ընկերությունը անձնագրավորել է հավի թարմ ծերտ, դասիչ՝ 1310010103013, պինդ թափոն, քանակությունը 2200 տոննա տարեկան: Վերազինման արդյունքում նոր հոսքագիծը նախագծված է այնպես, որ հավի ծերտը հոսքագծից դուրս է գալիս չոր վիճակով: Այս տեխնոլոգիական նորամուծության արդյունքում ունենալու ենք ծերտը, որպես օրգանական պարարտանյութ երկրորդային օգտագործման հնարավորություն, առանց այլ հավելյալ մշակումների: Այս տեսակետից հոսքագիծը տալու է մեծ առավելություն, կրճատվելու է էլեկտրական էներգիայի օգտագործման ծավալները և ծերտից օրգանական պարատանյութի ստացման ժամանակատար գործընթացը:

Ընկերությունը արտադրական տարածքում տեղադրել է արևային ֆոտովոլտային կայաններ, գումարային 600 կՎտ դրվածքային հզորությամբ: Կայանների շահագործման արդյունքում դեպի մթնոլորտ ածխաթթու գազի արտանետումների ծավալները, որպես ջերմոցային գազ, կկրճատվեն 7,790.61տ-ով հաջորդող 20 տարիների ընթացքում: Արևային ֆոտովոլտային կայանները հնարավորություն են տվել ընկերությանը կրճատել էլեկտրաէներգիայի գնման արժեքը:

Ընկերության տարածք տրանսպորտային միջոցների մուտքն իրականացվում է ախտահանման գործընթացներից հետո: Տարածքները և թռչնանոցներն անցնում են պարբերական ախտահանիչ լվացում՝ համաձայն ճյուղային նորմատիվների:

Ընկերության տարածքում կահավորված են հանդերձարաններ, որտեղ աշխատակիցներն ապահովված են առանձնացված հանդերձապահարաններով, լողախցիկներով: Տեղամասերում տեղադրված են առաջին օգնության համար նախատեսված դեղատուփեր:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

-թռչնանոցի հատակը խոնավեցնել մաքրման, քանդման, փոշի առաջացնող այլ գործողությունների ժամանակ,
- հնարավորության դեպքում անջատել պարապ ռեժիմում գտնվող մեքենաները և սարքավորումները,
- մշակել երթևեկության կառավարման պլան՝ աշխատողների և երթևեկության միջոցների սահուն տեղաշարժի հոսքը ու անվտանգությունը ապահովելու համար,
- բոլոր սարքավորումները և տեխնիկական միջոցները պետք է պարբերաբար ստուգվեն համոզվելու համար, որ դրանք գործում են ՀՀ-ի իրավական պահանջների շրջանակներում,
- սահմանափակել աղմուկ և թրթռում առաջացնող տեխնիկական միջոցների օգտագործումը, սահմանել աշխատանքային գրաֆիկ 09:00-19:00:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանը:

Փորձաքննական պահանջներ

- Պարբերաբար ստուգել մաքրությունը և ապահովել թռչնի ծերտի հավաքման հոսքագծի անխափան աշխատանքը:
- Պահպանել մաքուր և կոկիկ կայք, արագ մաքրելով թափվող թափոնները:
- Պարբերաբար լվանալ ծերտ տեղափոխող մեքենաների բեռնախցիկը:
-Պահպանել աէրոբային պայմանները թռչնանոցի օդային հոսանքներում՝ արտանետումները նվազագույնի հասցնելու համար ախտահանման աշխատանքների ժամանակ:
- Բոլոր սարքավորումները պետք է ունենան աղմուկի թույլատրելի մակարդակ:
- Ընկերության տարածք տրանսպորտային միջոցների մուտքը անհրաժեշտ է իրականացնել ախտահանման պրոցեդուրայից հետո:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզնի տոհմային ԹՏԽ-ի տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան